



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Рыболов

№ 5 издательство

М. 1905

321

12-41

521
2-41

ԵՐԵՅՍ ՈՒՆԱՆԻ


ԻՆՁ Է ԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Այս դաստիարակը կարդացել է Ազրբոյան
1882 թ. մարտի 11-ին:

Թարգմանութիւն

ՅԼԲ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ:

300
594-ՈՇ



Թ Ի Փ Լ Ի Ջ

Արագածիս Ա. Բուքարեւանի, Նիկ. 21.

1905

24 JUL 2013

321

26 SEP 2005

2-41 սյ
300

ԵՐԵՎԱՆ 2009

594-ՌԸ



ԻՆՁ Է ԱԶԳՈՒԹՅՈՒՆ

Այս դասախօսութիւնը կարդացել է Սօրբօնում
1882 թ. մարտի 11-ին:

12366



Թարգմանութիւն

ՅԱՐ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ:



Թ Ի Ֆ Լ Ի Զ


Արագատիպ Ա. Զուլթաթիլաճէի, Նիկ. 21.

1905

75405

2 7 SEP 1905

RECEIVED
MARCH 3 1905



Дозволено цензурою Тифлисъ 1905 года 3 марта.

Ն Ո Ւ Է Ր

ԱՆԿԵԼԾ ՍՐՏԻՑ ԲԳԽԱԾ

Իւր նախկին ուսուցչին՝

ՊԱՐՈՆ ՄԻՔԱՅԷԼ ՍԱԼՍՄԲԵԿԵՍՆԻՆ

Երախտապարտ հայ թարգմանչից:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ազգութեան գաղափարը մի վճռական գիտակցութիւն կամ ինքնաճանաչութիւն է, որը հետեւանք է մի ժողովրդի կրած հալածանքների ու նրա կրած անարդար տանջանքների արգասիք: Բայց երբ ազգութիւն կազմող ժողովուրդը կանգնած է ժամանակակից ճշմարիտ քաղաքակրթութեան ճանապարհի վրայ և յառաջ է ընթանում՝ չ'մոռանալով մի և նոյն ժամանակ իւր սեւ օրերը ու նախնեաց թողած թանկագին լիշտտակարանները ու նոցա առաքինի փառքը, այն ժամանակ այդպիսի մի օգտաւէտ խումբ մարդկութեան համար՝ ամենայն իրաւամբ յառաջ է բերում իւր գոյութեան իրաւունքը—raison d' être-ը ու մասնակից դառնում հանուր մարդկութեան քաղաքակրթութեան համերգին՝ հետեւապէս և նրա երանաւէտ երջանիկ վիճակին:

Ինչպէս մի անհատ իրաւունք ունի իւր արդար գոյութեան մասին լուրջ մտածելու՝ այնպէս և մի ազգ իրաւունք ունի իւր փառաւոր անցեալով, քաղաքակրթութեամբ, մեծ մարդկանցով ընդհանուր մարդկային առաջաւոր խմբերի դաս դասուելու և իրաւանց տէր դառնալու, իբրև օգտաւէտ տարր ազգերի համար յառաջադիմութեան ու քաղաքակրթութեան վէհ գործի մէջ:

Ազգութեան գաղափարը (բառի վսեմ նշանակութեամբ) նոր սկզբունք է, որ յատուկ է համակամ ոյժով տոգորուած անհատների խմբի, որի դրօշակի վերնագիրն է. տանջուիլ միասին, ապրել միակամ՝ ու անբաժան՝ յառաջ բերելով իւր ազատ գոյութեան տրդար իրաւունքը՝ համաձայն յառաջադէմ քաղաքակիրթ ազգերի սօցիալական օրէնքների:

Վերջացնելով իմ խօսքը ազգութեան տեսութեան մասին՝ ես կամեցայ ունենալ մեր հայ նորաբողոք ազգային գրականութեան մէջ Փրանսիայի պատկառելի գիտնական Էրնէստ Ռընանի «Ի՞նչ է ազգութիւնը» վերնագրով մի դասախօսութեան թարգմանութիւնը, որը կարդացել է նա Սորբօնում 1882 թուականին: Բացի այդ՝ բարևք համարեցի նաև, որպէսզի հայ ընթերցողը միջոց ունենայ աւելի որոշ եզրակացութեան գալու ազգութեան գաղափարի նկատմամբ, թարգմանաբար տպագրել նաև մի այլ Փրանսիացի հրապարակախօսի՝ այն

է՝ Չարլ. Բիգօյի պատասխանը Ռընանի դէմ նոյն սկզբունքի վերաբերմամբ:

Հաւատացած եմ, որ իմ այս փոքրիկ աշխատութիւնը զերծ չի կարող լինել պակասութիւններից ու սխալներից, բայց լի ամենայն պատկառանքով առաջարկում եմ հայ գրականութեան առն, անաչառ և անկողմնապահ դատաստանին, որտեղ ճշմարիտ ու անկեղծ քննադատը միայն չէր պիտի ունենայ,

ՅԱՐ. ՂԱՐԱԿԵՕԶԵԱՆՅՑ.

10-ն ապրիլի 1905 թ.
Տփլիս.



}}



ԻՆՉ Է ԱԶԳՈՒԹԻՒՆԸ:

Ես մտադիր եմ ձեզ հետ միասին հետազոտել մի գաղափար, որ թէև ըստ երևութին պարզ է, բայց շատ անգամ չափազանց մոլորութիւնների մէջ է ձգուծ:

Մարդկային ընկերութեան ձևերը խիստ պէս-պէս են: Մարդկանց մեծամեծ կոյտեր՝ ինչպէս Չինաստանը, Եգիպտոսը, հնագոյն Բաբելոնը: Հրէից և Արաբների նման տոհմեր. Աթէնքի և Սպարտայի պէս քաղաքներ. զանազան երկիրների միաւորութիւններ՝ ինչպէս Աքեմեդեան, Հռովմէական և Կարլովինգեան կայսերութիւններն էին. հայրենագուրկ համայնքներ, որոնք պահպանուած են լոկ կրօնական կապով, ինչպէս ժամանակակից Իսրայելացիք, արևապաշտները ¹⁾. ազգութիւններ՝ ինչպէս

¹⁾ Արևապաշտները կամ կրակապաշտները—պարսերը (մեր հին մատենագրերի պարսքը) կամ Գեբեները նախկին պարսից սերունդներն են, որոնք պահել են մինչև այսօր Զրադաշտի կրօնը: Արաբացոց տիրապետութիւնից յետոյ (641 թ.) պարսկաստանի այդ հնագոյն բնակիչները հա-

Փրանսիան, Անգլիան և նորագոյն ինքնավարութիւնների մեծ մասը. Զվեցարիայի և Ամերիկայի նման դաշնակցութիւններ. ընտանիքներ՝ ինչպէս են ծագումով, կամ աւելի ճիշդ՝ լեզուով կապուած Գերմանացիք, Սլաւոնները.— ահա այն բոլոր թէ անցեալում և թէ ներկայումս գոյութիւն ունեցող մարդկային խմբաւորութեան տեսակները, որոնց չի կարելի իրար հետ շփոթել՝ առանց ընկնելու ամենածանր անպատեհութիւնների մէջ: Փրանսիական լեզուաբանութեան ժամանակ կարծում էին, որ Սպարտացիք և Հռոմի նման փոքրիկ անկախ քաղաքների սահմանադրութիւնները ձեռք կ'տան նաև ժամանակակից մեծ ազգութիւններին, որոնք երեսուն կամ քառասուն միլիոն հոգուց են կազմուած: Ներկայումս աւելի ծանր սխալներ են անում.— շփոթում են ցեղը (раса) ազգութեան հետ և վերագրում են տոհմական՝ կամ աւելի ճիշդ՝ լեզուական խմբերին այնպիսի վեհապետու-

լածանքների ենթարկուեցան մահմեդական իշխողներէ կողմից և միայն Եղբ քաղաքում և Խորասան նահանգում կարողացան ապրիլ (այժմ մօտ 3000 տուն). իսկ մեծ մասը զաղթեցին Հնդկաստան: Այստեղ նոյա կենդրոնն է Բոմբէյ քաղաքն ու կղզին, որտեղ նոյա թիւը հասնում է 110,000 հոգու: Պարապում են առևտուրով. վաճառականներ, սեզանաւորներ, առևտրական միջնորդներ են: Նրանց մի փոքր մասը ներկայումս ապրում է և Բագուի շրջանում: Ծան. հայ. թարգմ.

թիւն, որ նման է իրօք գոյութիւն ունեցող ժողովուրդների վեհապետութեանը: Աշխատենք այս դժուար հարցերի համար ո՛ր և է ճիշդ լուծումն գտնել՝ ապա թէ ոչ բառերի նշանակութեանց ամենափոքր շփոթութիւնը կարող է վերջը ամենադառն սխալանքների հասցնել: Մեր խնդիրը փոքր ինչ փափուկ է. դա համարեան մի կենդանահատութիւն (ВИБИСЕКЦІЯ) է. մենք պէտք է կենդանիների հետ վարուենք այնպէս, ինչպէս սովորաբար վարում են մեռածների հետ: Մենք կ'աշխատենք այստեղ կատարեալ սառնու անաչառ լինել:

Ա.

Հռոմէական կայսերութեան անկումից, կամ լաւ է ասել, Կարոլոս Մեծի կայսերութեան քայքայուելու օրից սկսած՝ արևմտեան եւրոպան մեզ ներկայացնում է ազգութիւնների բաժանուած, որոնցից մի քանիսը ժամանակ առ ժամանակ ձրգտել են գերիշխանութեան հասնել, բայց երբէք չեն լաջողեցրել այդ բունը երկար ժամանակամիջոցով: Ինչ որ չը կարողացան Կարոլոս V, Լիւդովիկոս XIV, Նապոլէօն I, հաւանական է՝ ոչ ոք չի կարող անել ապագայում: Հռոմէական մի նոր կայսերութիւն հաստատել կամ Կարոլոս Մեծի մի նոր կայսերութիւն վերականգնել այժմ անկարելի

է գարձել 1). Եւրոպայի ինքնուրոյն ազգերի բա-
 ժանումը այնքան մեծ է ներկայումս, որ եթէ մի
 ազգ ընդհանուր տիրապետութեան ձգտումն ար-
 ասայտէր, այն ժամանակ մի քանի տէրութիւն-
 ներ կը կազմէին դաշնակցութիւն, որ հարկադրէր
 այդ փառասէր ազգին վերադառնալու իւր բնական
 սահմանները: Ուստի, երկար ժամանակուայ հա-
 մար արդէն մի տեսակ յայտնի հաւասարակշու-
 թիւն հաստատուել է: Փրանսիան, Անգլիան, Ռու-
 սաստանը և Գերմանեան գոյութիւն կ'ունենան
 դեռևս հարիւրաւոր տարիներ և չընայելով բոլոր
 զէպքերին կամ պատահմունքներին, որոնք կարող
 են առաջ գալ ապագայում, ինչպէս շախմատի
 խօզի պատահական ղիպուածներ, բայց և այնպէս
 նոքա, այդ ազգերը, ոչ մի ժամանակ չեն ձուլուիլ
 իրար հետ:

Ազգութիւններ այդ մտքով վեր առած՝ ինչ-
 պէս օրինակ Փրանսիան, Անգլիան և այլն, պատ-

1) Որովհետև մի մտտորապէս զարգացած կամ
 բազմաբարձրութեամբ ազգութեան կեանքում կառավարիչներին
 անհատական գործունէութիւնը չունի համարեա ոչինչ
 նշանակութիւն, ուրեմն նրանց գործունէութիւնը պիտի
 չեզոքանայ բիչ-բիչ. իսկ բազմաբարձր կեանքի յառաջադի-
 մութիւնը կատարուած է բնական անսայթաք ընթացքով,
 համաձայն մարդկային սօցիալական օրէնքների, որոնք
 անցնում են ժառանգաբար յաջորդելով:

մութեան մէջ բոլորովին նոր երևոյթ են: Հին
 դարերում այդպիսիները չըկային. Եգիպտոսը, Չի-
 նաստանը և վաղեմի Քաղդէան ազգութեան. ոչ մի
 աստիճանի վրայ չեն գտնուել. դրանք մարդկանց
 հօտեր էին, որոնց առաջնորդելիս են եղել արե-
 գակի որդիքը կամ երկնքի որդին: Երբէք չըկային
 Եգիպտոսի քաղաքացիներ, ամենևին չեն եղել
 Չինաստանի քաղաքացիներ: Կլասիքական հին
 դարերում կային հասարակապետութիւններ, թա-
 զական իշխանութիւններ, հարևան հասարակապե-
 տութիւնների դաշնակցութիւններ և քայտերու-
 թիւններ: Բայց ազգութիւններ մեր հասկացողու-
 թեամբ վեր առած՝ չըկային: Աթէնքը, Սպարտան,
 Սիդոնը և Տիւրոսը՝ դրանք բոլորը փոքրիկ կենդ-
 րոններ էին, տեղային հայրենասէրներից բաղկա-
 ցած. բայց այդ ամենը ոչ այլ ինչ էին՝ եթէ ոչ
 քաղաքներ, որոնք իրանց իշխանութեան տակ ու-
 նէին համեմատաբար ընդարձակ երկիրներ. Գալ-
 լիան, Իսպանիան, Իտալիան, քանի որ Հռոմէական
 կայսերութիւնը նոցա դեռ չէր կլանել, բաղկանում
 էին առանձին առանձին փոքրաթիւ ժողովուրդնե-
 րից, որոնք թէև յաճախ միանում էին միմեանց
 հետ, բայց այդ միութիւնը լինում էր առանց
 կենդրոնական հաստատութիւնների և առանց իշ-
 խանական հարստութիւնների: Ասորեստանի կայսե-
 րութիւնը, Պարսկական կայսերութիւնը, Աղեք-
 սանդը Մակեդոնացու կայսերութիւնը, դրանք չեն

եղել «Հայրենիքներ»: չեն եղել երբէք Ասորեստանի Հայրենասէրներ. Պարսկական կայսերութիւնն էլ մի ընդարձակ աւատական պետութիւն է եղել: Աղէքսանդր Մակեդոնացու կտտարած հսկայական յեղաշրջութիւնը ոչ մի ազգութիւն չըստեղծեց, չ'նայելով՝ որ այնքան հարուստ հետեանքներ ունեցաւ քաղաքակրթութեան պատմութեան համար:

Հռոմէական կայսերութիւնը աւելի մօտ է այն վիճակին, որին հարկաւոր կրկին էր «Հայրենիք» անունը տալ: Երբ պատերազմները վերջացան, որ մեծ չարիք էր ժողովրդի համար, այն ժամանակ առաջուայ խիստ ու դաժան Հռոմէական իշխանութիւնը շատ շուտով սիրելի դառաւ ամենքին: Այդ մի մեծ ընկերակցութիւն (accopiaia) էր, կարգաւորութեան, խաղաղութեան և քաղաքակրթութեան համանիշ տիպար: Կայսերութեան վերջին տարիներում, վեհապանճ հոգիների, լուսամիտ եպիսկոպոսների ու գիտնականների բոլոր համակրութիւնը գրաւել էր «Հռոմէական խաղաղութիւնը», իբրև հակապատկեր բարբարոսների անմեղ խառնակութեան: Սակայն այդ կայսերութիւնը, որ տասներկու անգամ մեծ էր այժմեան ֆրանսիայից, չի կարողանում ստեղծել պետութիւն արդի հասկացողութեամբ: Արևելքի և Արևմուտքի բաժանումը անխուսափելի էր: Զանազան փորձեր եղան հիմնելու Ք. Ճ. յ. մի գալիական կայսերութիւն, որոնք ոչ մի հետեանքի չըհասան: Միմիայն գերմանական

արշաւանքը լոյս աշխարհ բերեց այն սկզբունքը, որը յետագայ ժամանակներում հիմք դարձաւ ազգութիւններ ստեղծելու համար:

Յիրաւի, ինչ արին գերմանական ազգերը իրանց արշաւանքների օրերից, այն է V դարից մինչև նորմանդական վերջին աշխարհակալութիւնները X դարում: Նոքա սակաւ փոփոխեցին ցեղերի ներքին էութիւնը, բայց ներմուծեցին իշխող հարստութիւններ և զինուորական ազնուապետութիւն նախկին Արևմտեան կայսերութեան շատ թէ քիչ աչքի ընկնող մասերում, որոնք ստացան իրանց նուաճողների անունները: Այդպիսով կազմուեցան Փրանսիան, Բուրգունդեան, Լոմբարդիան և վերջերը Նորմանդիան: Փրանկների կայսերութեան արագ-արագ զարգացումը մի առ ժամանակ վերականգնում է Արևմուտքի միութիւնը: Բայց այդ կայսերութիւնը անդառնալի կործանւում է IX դարի կէսերում: Եւ ահա Վերդինի 1) դաշնադրութիւնը որոշեց սահմանագծերը, որոնք իսկայէս անջնջելի են, և այդ օրից Փրանսիան, Գերմանիան, Անգլիան, Իսպանիան ընթանում են զանազան ուղղութեամբ, յաճախ իրարու հակառակ ճանապարհներով:

1) Փրանսիայի հիսիս-արևմտեան անկիւնում, Մասս գետի միջին հոսանքում:

Բայց իրօք որն է այդ դանազան պետութիւնների բնորոշ գիծը: Այդ այն է, որ նոցա բազմազան ժողովուրդները ձուլուել են իբրև մի մարմին: Նոր լիշած երկիրներում մենք ոչ մի բան չենք տեսնում, որ նման լինի Տաճկաստանու եղածին. այստեղ Թուրքը, Յոյնը, Հայը, Սլաւոնը, Արաբը, Ասորին, Քուրդը այսօր իրարից այնքան են որոշուում, ինչքան իրենց նուաճման օրը: Երկու տասնամյակի հանգամանքներից է յառաջացել այդ արդիւնքը. նախ այն՝ որ գերմանական ազգերը՝ հէն որ սկսեցին փոքր ի շատէ երկարատե շփումն ունենալ յունական և լատինական ժողովուրդները հետ, ընդունեցին քրիստոնէութիւնը: Երբ յաղթողը և յաղթուողը դաւանում են միեւնոյն կրօնը կամ, աւելի լաւ է ասել, եթէ յաղթողը ընդունում է յաղթուողի կրօնը, այն ժամանակ տաճկական սիստեմը, այն է՝ մարդկանց միջի կրօնական բացարձակ խտրութիւնը չի կարող տեղի ունենալ: Երկրորդ հանգամանքը այն է եղել, որ նուաճողները իրենք իրենց լեզուն մոռացել են. Խլոզվիկի Ա լարիկի, Գոնգբերդի, Ալբոյիների թոռները արդէն խօսում էին հռոմէական լեզուով: Ինքն ըստ ինքեան սա մի ուրիշ առանձնութեան հետեանք էր. այն է՝ որ Ֆրանկները և նորմանները իրանց ցեղից շատ քիչ կանայք ունէին: Նոցա պետերը շարունակ մի քանի սերունդ ամուսնանում էին գերմանուհիների հետ, բայց նրանց



հարձերն ու երեխաների սանտուսերը քողարկել տինացի կանայք էին. այնպէս որ յետոյ արդիւնքեղը ամուսնացել էր լատինուհիների հետ: Ահա թէ ինչ է պատճառը, որ երբ ֆրանկներն ու գոթերը հաստատուեցան հռոմէական երկրներում, այն ժամանակից գոթական և ֆրանկ լեզուները շատ սահմանափակ նշանակութիւն ունեցան: Այդպէս չեղաւ Անգլիայում. որովհետև Անգլո-Սաքսեւորը իրանց արշաւանքի ժամանակ անշուշտ ունէին ֆրանց հետ նաև կանայք: Բրիտանի բնակիչները փախան, և բացի այդ՝ լատինացիք այլ ևս չէին իշխում, կամ լաւ է ասել, երբէք չէն իշխել Բրիտանիայում: Վ դարում եթէ առհասարակ Գալլիայում գալլերէն խօսած լինէին, այն ժամանակ Խլոզվիզը և իւր զօրքը անկասկած չէին փոխէ գերմանական լեզուն Գալլերէնի:

Այստեղից յառաջացաւ այն կարևոր փաստը, որ չընայելով Գերմանացի աշխարհակալների բարձր արտադանց կոպտութեանը, բայց և այնպէս նրանց երած հասարակական կեանքի ձևերը դարերի ընթացքում ազդութեան կողապարը դարձան: Շատ արևամբ Փրանսիա սկսեցին կոչել այն երկիրը, որտեղ մուտք գործեցին աննշան թուով ֆրանկներ: X դարի առաջին երբերում, որոնք գովաբանում են քաջերի սխրագործութիւնները և որոնց յէջ այնպէս պարզ պատկերանում է այդ ժամանակի ոգին. այդ երգերում ֆրանսիայի բոլոր բնա-

կիշները Փրանսիացիք են կոչուում: Փրանսիացիք
 բնակիչների ցեղական խտրութեան գաղափարը, որ
 այնքան պարզ երևում է Գրէգուաու-գը-Տուսի
 գրուածքներում, բնաւ չի նկատուում Հուգօ-Կա
 պետից յետոյ՝ մատենագիրների և բանաստեղծների
 երկերում: Ազնուի ու շինականի («անարգ») մէ
 եղած զանազանութիւնը նրանք շեշտում են կա
 րելուոյն չափ աւելի ու աւելի: Բայց այդ խտրու
 թիւնը ցեղական զանազանութիւնից չէ յառաջա
 նում, այլ ամբողջապէս արիութեան, սովորութիւն
 ների և դաստիարակութեան որոշութիւնից, որոն
 ժառանգաբար անցել են որդոց որդի: Ոչ ոք
 մաքովն էլ չի անցնում, որ դրա հիմքը հէն
 աշխարհակալութիւնն է: Այս սխալ սիստեմը, որ
 հիման վրայ ազնուականութիւնը իւր ծագում
 ստանում էր թագաւորների տուած արտօնութեան
 շնորհիւ՝ իր աղբին մատուցած մեծամեծ ծառայու
 թիւնների փոխարէն, — այնպէս որ իւրաքանչիւ
 ազնիւ մարդ գառնում է մի ազնուացած մարդ,
 այդ սիստեմը հաստատուեց XIII դարից իբրև
 դաւանանք: Նոյն բանը պատահեց նաև գրեթէ
 բոլոր նորմանական աշխարհակալութիւնից յետոյ
 այնպէս որ մի երկու սերունդից յետոյ նորմանա
 կան աշխարհակալներն էլ չէին գամազանուու
 մնացեալ բնակչութիւնից, թէև դրանով նրան

1) Փրանսիայի պատմիչ:

ազդեցութիւնը դարձեալ պակաս չէր: Նոքա տուին
 նուաճած երկրին ազնուականութիւն, պատերազ
 մական հակումներ, հայրենասիրութիւն, որոնք
 մինչև այդ ժամանակ գոյութիւն չունէին նոյն
 երկրում:

Մոռացութիւնը, կ'ասենք մինչև իսկ, պատ
 մական մոլորութիւնը — ազգութեան կազմակերպու
 թեան էական գործօնն է, այնպէս որ պատմական
 գիտութիւնների յառաջագիմութիւնը յաճախ վտան
 գաւոր է ազգութեանը: Եւ իրաւի, պատմական
 հետազոտութիւնը երևան է հանում բռնութեան
 այն ամեն իրողութիւնները, որոնք բոլոր քաղա
 քական յօրինուածների ծագման զուգընթաց են
 եղել, և մինչև անգամ այնպիսի յօրինուածների,
 որոնք շատ բարերար հետևանքներ են ունեցել 1)

1) Յիրաւի, համաձայն քաղաքական հանգամանքե
 րի՝ մի ազգութեան կեանքի եղանակներն էլ փոփոխուում
 են: Միշտ հանգամանքներն ունեն իրանց հետ մարդկային
 կեանքի յատուկ կողմերը: Եթէ զիմելու լինինք նոյն իսկ
 բնախօսական օրէնքին՝ կըտեսնենք, որ օրգանական մար
 միներէ իւրաքանչիւրի ծագումը և փոփոխումը սկսած
 թովայիններից՝ համաձայն իւր վրայ դրած ճնշման՝ իւր
 ծաւալով սեղմուում է, բայց ընդհակառակն նրա մարմնի
 մէջ առաձգական զօրութիւնը աճում է համեմատական
 կերպով. ահա այդ ժամանակ նոյն մարմինը աւելի եռան
 դով, ոյժով սկսում է լայնանալ իւր ծաւալով և տեղ բռնել
 տիեզերքում: Նա աշխատում է հեռացնել իրանից այն բո
 յոր խաժամուժային խոչերը, որոնք որոշ պարբերութիւնից

Առհասարակ միութիւնը միշտ կատարուել է բիրտ կերպով. օրինակ, հիւսիսային և հարաւային Ֆրանսիայի միութիւնը հեռեանք էր այնպիսի մի կոտորածի ու այնպիսի արհաւիրքի (терроръ), որ տեւց՝ գրեթէ մի ամբողջ դար: Ֆրանսիական թագաւորը, որը, համարձակուում ենք ասել, միացնող գարեւոր ոյժի կատարելատիպն է, Ֆրանսիացի թագաւորը, որ աշխարհումս եղած ամենակատարեալ ազգային միութիւնը ստեղծեց, այդ թագաւորը՝ եթէ մենք մօտիկից նայենք նրա վրայ, կորցնում է իւր կախարդանքը. նրա ստեղծած ազգութիւնը անիծել է նրան, և այժմ միայն կրթուած մարդիկ գիտեն նրա արժէքը և նրա արածը:

Միմիայն հակապատկերներով նշմարելի են դառնում արեւմտեան Եւրոպայի պատմութեան այդ նշանաւոր օրէնքները: Ետտ երկիրներ յաջողութիւն չ'ունեցան այն գործում, որն այնպիսի զարմանալի յաջողութեամբ գլուխ բերին Ֆրանսիական թագաւորները մասամբ բռնի և մասամբ արդար միջոցներով: Մաճառները և սլաւոնները Սուրբ Ստեփաննոսի ¹⁾ Գայիսոնին ապաւինած՝ մնացել են

յետոյ կրկին կարող են նրա ազատուած օրինական գոյութեանը վտանգ սպառնալ: Այդ օրէնքը բոլոր օրգանական մարմինների ընդհանուր կարեւոր և փրկարար յատկանիշն է՝ Ծանօթ. հայ. թարգ.

¹⁾ Ստեփաննոս Ի Վենգրիայի թագաւորը (997—1038 թ.) բրիտոնէութիւնը տարածեց Վենգրիայում:

նոյնքան միմիանցից անջատ, ինչքան սրանից ութ դար առաջ: Հաբսբուրգեան տունը՝ անձեռնհաս լինելով ի մի ձուլել իւր երկիրների զանազան տարեքները՝ կառավարել նրանց, մինչգեռ նրանք միմեանցից անջատ ու յաճախ թշնամական յարաբերութիւնների մէջ են եղել: Բօհեմիայում չեխ և գերմանական տարրերը իրար հետ խառնուած են ինչպէս իւղն ու ջուրը մի բաժակում: Տաճկական քաղաքականութիւնը, — որոշել ազգութիւններին կրօնական պաշտամունքի տեսակէտից, — շատ աւելի ծանր հետեւանքներ ունեցաւ. նա եղաւ Արևելքի կործանման պատճառը: Վերցրէք մի քաղաք. օրինակ Սալոնիկը կամ Չմիւռնիան, և գուք այնտեղ կը տեսնէք հինգ կամ վեց համայնք, որոնցից իւրաքանչիւրն ունի իւր յիշատակները և որոնք միմեանց հետ ոչինչ կապ չունին: Իսկ ազգութեան էութիւնն էլ հենց այն է. որ նրա միջի բոլոր անհատները ունենում են միմիանց մէջ շատ սերտ կապեր և միեւնոյն ժամանակ մոռանում են նոցա անջատող շատ բաներ: Ոչ մի Ֆրանսիական քաղաքացի չըզիտէ թէ նա Բուրգունդացի

երկրին կազմակերպութիւն ու օրէնքներ տուեց և իւր արածների համար սրբերի կարգը դասուեց. նորա յաջորդները ստացան պապից Առաքելական Մեծութեան տիտղոսը և ի պատիւ նոցա սահմանուեց Սուրբ Ստեփաննոսի Վենգրիական շքանշանը:

Ծանօթ. հայ. թարգ.

է՛ թէ Ալլան, Տայֆալ է թէ Վեստ-Գոթ. ամենայն
 Ֆրանսիական անհատ կամ քաղաքացի պէտք է, որ
 մոռացած լինի Բարդուղիմէոսեան գիշերը, հարաւի
 կոտորածները XVIII դարում: Զրկայ Ֆլանսիայում
 նոյն իսկ տասն ընտանիք, որոնք կարողանային
 ապացուցանել իրենց ֆրանկ ծագումը, և բացի
 այդ՝ անբաւարար կրկինէր մի այդպիսի ապացոյց,
 որովհետեւ այդտեղ եղել են հազարաւոր անյայտ
 ամուսնութիւններ, որոնք կարող են քանդել ազ-
 գաբանների բոլոր սխտեմները:

Նորագոյն ազգութիւնը պատմական արդիւնք
 է մի շարք դէպքերի, որոնք՝ տյայէս ասած՝ հա-
 ւաբուում են մի ընդհանուր կէտում: Ազգային մի-
 ութիւնը կատարուում է կամ որեւէ հարստութեան
 ձեռքով, ինչպէս եղաւ Փրանսիայում, կամ նա-
 հանգների ուղղակի ցանկութեամբ, ինչպէս եղաւ
 Հօլանդիայում, Զվեցերիայում, Բելգիայում, և կամ
 փրապետող տրամադրութեան շնորհիւ, որ ի վեր-
 ջոյ յաղթում է աւատական իշխանութեան կա-
 մայականութիւններին, ինչպէս մենք տեսնում
 ենք այդ Իտալիայում և Գերմանիայում: Բոլոր
 այդ յօրինուածները ունեցել են իրանց խորին գո-
 յութեան իրաւունքը, *raison d'être*-ը: Այդպիսի
 դէպքերում սկզբունքներն երևան են գալիո ամե-
 նից անսպասելի պտտահարների միջոցաւ: Մեր
 օրերը՝ մենք տեսանք թէ՛ ինչպէս Իտալիան միա-
 ցաւ, չընայելով իւր կրած պարտութիւններին:

մենք տեսանք Տաճկաստանը խորտակուած, չընա-
 յելով իւր տարած յաղթանակներին: Ամեն մի պար-
 տութիւն առաջ էր մղում Իտալիայի գործը, ամեն-
 մի յաղթանակ կործանում էր Տաճկաստանը, որովհե-
 տեւ Իտալեան ազգութիւն է, իսկ Տաճկաստանը՝ Փոքր-
 Ասիայից գուրս—ոչ: Փրանսիային է պատկանում
 ազգութիւն հռչակելու պատիւը—Այդ ֆրանսիական
 յեղափոխութեան շնորհիւն է-որ ազգութիւնը գոյու-
 թիւն ունի ինքն ըստ ինքեան: Մենք ¹⁾ չըպէտք
 է պախարակենք մեզանից օրինակ աւնողներին:
 Ազգութեան սկզբունքը մեր սկզբունքն է: Բայց
 ինչ է ազգութիւնը: Ի՞նչ է պատճառը, որ Հօ-
 լանդիան ազգութիւն է կազմում, իսկ Հաննովերը
 կամ Պարմայի մեծ դքսութիւնը—ոչ: Ի՞նչպէս է
 որ Փրանսիան իբրև ազգութիւն շարունակում է
 յարատեւել, այն ինչ՝ նրան ստեղծող սկզբունքը
 այլ ևս չկայ: Ի՞նչպէս է, որ Զվեցերիան, որտեղ
 կան երեք լեզու, երկու կրօն, երեք թէ չորս ցե-
 ղեր, այնուամենայնիւ ազգութիւն է կազմում.
 այն ինչ՝ Տօսկանան, օրինակ, որ այնքան համա-
 ցեղ է, ազգութիւն չէ կազմում: Ինչո՞ւ Աւստրիան
 պէտութիւն է և ոչ ազգութիւն: Ինչո՞վ է ազգու-
 թեան սկզբունքը գանազանուում ցեղական սկզ-
 բունքից: Ահա՛ այն կէտերը, որոնց վերայ կանգ է

¹⁾ Հեղինակը խօսում է իւր համազգի-ֆրանսիացոց
 մասին: Ծանօթ. հայ. թարգմ.

առնում խուզարկող միտքը, որ ինքն իւր հետ, այսպէս սասած, համաձայնութիւն կայացնի: Ամբօնի գործերը սակաւ են ղեխավարուում այդպիսի խորհրդածութիւններով, բայց փութաջան մարդիկ ուզում են այս նիւթը հաստատ հիմքի վրայ դնել և այսպիսով փարատել այն մոլորութիւնները, որոնց մէջ խարխափում են թերուս գլուխները:

Բ.

Մի բանի քաղաքագէտների տեսութեան համաձայն ազգութիւնը նախ և առաջ մի հարստութիւն է (ДИНАСТІЯ): որ լիշեցնում է մի հնագոյն անզուսպ ու բիրտ աշխարհակալութիւն՝ սկզբում ընդունուած, բայց յետոյ ժողովրդից մոռացուած: Յիշեալ քաղաքագէտների կարծիքով՝ նահանգների համախմբութիւնը, որ կատարուել է որևէ հարստութեան ձեռքով, նրա արիւնալի պատերազմներով, նրա ամուսնական կապերով, նրա գաշնադրութիւններով, այդ համախմբութիւնը, ասում են, կործանուում է այն ժամանակ, երբ անյայտանում է նրան յառաջացնող կորուստաբեր հարստութիւնը. կասկած չըկայ, որ նորագոյն ազգութիւնների մեծ մասը յառաջ են եկել որևէ աւատական ընտանիքի շնորհիւ, որ երկիրներ է ստացել ամուսնական գաշնադրութեամբ և որը եղել է կենդրոնացման, այսպէս ասած՝ սաղմը: 1789 թուականին ֆրանսիայի սահմանները չունէ-

ին ոչ բնական և ոչ անհրաժեշտ մի բան: Լայն շերտը, որ կապետինգների տունը կցել էր Վերդիւնի գաշնադրութեան որոշած (ֆրանսիական) նեղ սահմանին, այդ շերտը գրեթէ լիշեալ տան անձնական սեպհականութիւնն էր կազմում: Այն ժամանակամիջոցին, երբ տեղի ունեցան այդ յաւելուածները, ոչ մի գաղաբար չունէին ոչ բնական սահմանների, ոչ ազգային իրաւունքների և ոչ էլ նահանգների կամքի ու ցանկութեան մասին: Անգլիայի, Հոլանդիայի և Եստրանդիայի միութիւնը նոյնպէս հարստութեան գործ է եղել: Իտալիան այնքան ուշ ազգութիւն գարձաւ միայն այն պատճառով, որ նրա բազմաթիւ թագաւորող տներից ոչ մէկը մինչև այս դարը չըդարձաւ միութեան կեդրոն: Չարմանալի բան. մուսլ Սարդինիա կղզուց, որ հազիւ թէ Իտալական երկիր է, ահա այդ կղզուց ստացաւ Իտալիան արքայական տիտղոսը): Հոլանդիան, որն ինքը ստեղծեց իրան հերոսական վճռողական սխրագործութեամբ, այնուամենայնիւ սերտ ամուսնութեամբ կապուեց Օրանեան տան հետ և մեծ փորձանքների կ'ենթարկուէր, եթէ այդ կապը ոչնչանար:

1) Որովհետև Սալոյեայի տունը կրում էր իւր թագադիր իշխանութեան տիտղոսը Սարդինեայից ստացած իշխանութեան հիման վրայ (1720 թ.)

Ծանօթ. հայ. թարգմ.

Սակայն այդ օրէնքը անպայման է՝ արդեօք: Անկասկած—ոչ: Զվեցերիան և Միացեալ Նահանգները, որոնք կազմուել են յաջորդաբար յաւելուածների գումարումներով, հարստութեան ոչ մի հիմք չունեն: Ես չեմ քննի նոյն հարցը նաև Փրանսիայի վերաբերմամբ. դորա համար հարկաւոր կը լինէր պագայի գաղտնիքն իմանալ: Միմիայն այսքանը կասեմ, որ Ֆրանսիական այն մեծ թագաւորութիւնը այնչափ ազգային էր դարձել, որ նրա անկման հետեւեալ օրը ազգութիւնը կարողացաւ կանգուն մնալ առանց թագի: Բացի դրանից՝ XVIII դարը ամեն մի բան փոխել էր: Մարդը կրկին վերադարձել էր, դարերով անկումից յետոյ, դէպի հին աշխարհահայեացքը, նա սկսեց յարգել ինքն իրան՝ ճանաչելով միանգամայն իւր մարդկային իրաւունքները. «Հայրենիք» և «քաղաքացի» բառերը կրկին ստացել էին իրանց նախկին նշանակութիւնը: Այսպիսով հնարաւոր եղաւ կտտարելու մի շատ յանդուգն անդամահատութիւն (операция), որ երբ և իցէ գործադրուել է պատմութեան մէջ. մի անդամահատութիւն, որ կարելի է համեմատել բնախօսական այն փորձի հետ, երբ աշխատում են ստիպել ապրելու այն մարդուն, որին արդէն զրկել են ուղեղից ու սրտից:

Պէտք է ուրեմն համաձայնել, որ ազգութիւնը կարող է գոյութիւն ունենալ առանց հարրստութեան և մինչև անգամ այն ազգերը, որոնք

կազմուել են հարստութիւններով, կարող են գատուել այդ հարստութիւնից և՛ այնուամենայնիւ չըկորցնել իրենց գոյութիւնը: Հին սկզբունքը, որ միայն իշխանների իրաւունքներն էր ի նկատի առնում, այժմ էլ գոյութիւն ունենալ չի կարող: Բացի հարստութեան սկզբունքից կայ և ազգային սկզբունք: Արդեօք ինչ նշանի վրայ պէտք է հիմնել այդ ազգային իրաւունքը. ինչ նշանով կարելի է ճանաչել այն. ինչ շօշափելի իրողութիւնից պէտք է բղխեցնել այն:

I Յեղից, պատասխանում են ոմանք՝ վստահաբար: Աւատական իշխանութեան, իշխանների ամուսնութեան և ղիւանագէտների վեհաժողովների արդիւնք եղող արուեստական բաժանմունքները փթած են և հին: Ամուր և յարատե է ազգաբնակչութիւնների ցեղը միայն: Ահա՛ այն՝ որ իրաւացի է և օրինաւոր: Գերմանական ընտանիքը, օրինակ, այս տեսութեան համեմատ, իրաւունք ունի ժողովել գերմանականութեան ցրուած անդամներին, և նոյն իսկ այն ժամանակ, երբ այդ անդամները հետամուտ չեն լինում միութեան: Գերմանականութեան իրաւունքը աւելի զօրեղ է որևէ նահանգի վրայ, քան նոյն նահանգի բնակիչների իրաւունքը նոյն իսկ իրենց վրայ: Այդպիսով ստեղծուում է մի տեսակ նախնական իրաւունք, որ նմանութիւն ունի թագաւորների աստուածային իրաւունքին: Սրանից առաջանում է մի մեծ սխալ,

որը եթէ տարածուէր, պիտի ոչնչանար եւրոպական քաղաքակրթութիւնը, և ազգութիւն կաղմող անհասանելի բացարձակ ազատութեան արշալոյսը: Որքան ազգութեան սկզբունքը արդարացի և օրինաւոր է, նոյնքան էլ ցեղերի նախնական սկզբունքի իրաւունքը նեղ է և վտանգալից մարդկութեան երջանիկ վիճակի համար:

Հին քաղաքացիական և տոհմական համայնքներում, խոստովանում ենք, ցեղն ունէր առաջնակարգ կարևորութիւն: Հին քաղաքն ու տոհմը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ ընտանիքի ընդարձակումն: Սպորտայում, Աթէնքում բոլոր քաղաքացիք աւելի կամ պակաս մօտիկ ազգականներ էին միմեանց: Նոյնն էր և Իսրայէլի որդոց մէջ. այդպէս է այժմ և արաբ ցեղերի մէջ: Աթէնքից, Սպարտայից, Իսրայէլի ցեղից անցնենք Հռօմէական կայսրութեանը: Այնտեղ իրերի վիճակը բոլորովին այլ է: Նախ ստեղծուելով բռնութեամբ և ապա պահպանուելով շահախնդրութեամբ, քաղաքների և իրարուց բոլորովին տարբեր նահանգների այդ մեծ շեղջակոյտը հասցնում է ցեղական գաղաբարինամենաճանր հարուածը: Քրիստոնէութիւնը՝ իւր համաշխարհային ու անպայման ազատ ոգով¹⁾ աւելի յա-

1) Երբ բրիտանական ազատ եկեղեցին շեղուած է լինում բռն վարդապետութիւնից ու ինքնուրոյնութիւնից՝

ջողակ է գործում նոյն ուղղութեամբ. նա մտերիմ դաշն է կապում Հռօմէական կայսրութեան հետ և միութեան այդ երկու աննման գործիչների ազդեցութեամբ ազգագրական իրաւունքը դարերով զրկւում է մարդկանց գործերը ղեկավարելուց:

Բարբարոսների արշաւանքը, հակառակ ամենայն արդարութեան, էլի մի քալ էր այդ ուղղութեամբ: Բարբարոս թագաւորութիւնների կտորտանքները տոհմագրական ոչ մի բան չունէին, Նոքա կառավարում էին աշխարհակալների բիրտ ոյժով և կամայականութեամբ: Ստորագրեալ ազգաբնակութեան ցեղական յատկանիշները նոցա համար բոլորովին նշանակութիւն չունէին: Կարօլոս մեծը մի ուրիշ ձևով վերանորոգեց Հռօմը, — կազմեց մի միացած կայսրութիւն, բաղկացած ամենապէսպէս ցեղերից: Վերգիւնի դաշնադրութեան հեղինակները անյողդողդ քաշելով հիւսիսից հարաւ իրանց երկու մեծ գծերը, ամենևին ուշադրութիւն չըդարձրին այդ գծերի աջ ու ձախ կողմն ապրող մարդկանց ցեղի վրայ: Միջին դարերի վերջում կատարուած սահմանների փոփոխութիւնները նոյնպէս հեռու էին որ և է ազգագրական ձգտումից: Թէև Կապետինգ-

իբրև համամարդկային կեանքի ազատութեան գրաւականներից մէկը:

ների տան յետագայ քաղաքականութիւնը հասաւ այն հետեանքին, որ սկսեց հաւաքել հին Գալլիայի երկիրները Փրանսիա անուանով. սակայն դա հետեանք չէր նոյն երկիրների միանալու ցանկութեան իրենց համազգիների հետ: Գոֆինէ, Բրէս, Պրովանս և Փրանչկոնտէ,¹⁾ այլևս չէին էլ յիշում իրանց ընդհանուր ծագումը. Գալլիաց ու գիտակցութեան ամենայն հետք արդէն կորել էր մեր թուականութեան III դարից սկսած, և միայն պատմական հետազոտութեամբ է որ մեր օրերում գտան Գալլերի բնաւորութեան յատկանիշները:

Բայց և այնպէս ազգագրական պատճառը չէր կարող ոչ մի նշանակութիւն չունենալ նորագոյն ազգութիւնների կազմակերպութեան գործում: Փրանսիան—Կելտական, Իբերիական և Գերմանական է: Գերմանիան—Գերմանական, Կելտական և Սլաւոնական է: Իտալիան մի երկիր է, որտեղ ազգագրութիւնը ամենից աւելի խառնաշփոթ է: Գալլերը, Էտրուսկները, Պելագգները, Յոյները,—չը խօսելով շատ ուրիշ տարերքների մասին,—մի անլուծելի խառնուրդ են կազմում ոչնտեղ. Բրիտանական կղզիները՝ միասին վեր առած՝ կազմում են

¹⁾ Դորա բոլորը գտնուում են Փրանսիայի արևելեան մասում Ռոնա գետի աւազանում, բայց հոսանքի ձախ կողմը, որտեղ տարածւում են Ալպեան լեռների արևմտեան շղթաները:

Ծան. հայ. թարգմ.

կելտական ու գերմանական արեան մի խառնուրդ, որոնց յարաբերութիւնը դժուար է առանձնապէս որոշել:

Անտարակոյս զուտ ցեղ չըկայ և հիմնել քաղաքագիտութիւնը տոհմագրական հետազոտութեան վերայ—դա գլխովին ցնորք է: Ամենից ազնիւ երկիրները, այն է՝ Անգլիան, Փրանսիան և Իտալիան, — նրանք են, որոնց մէջ արեան խառնուրդը ամենից շատ է: Արդեօք, Գերմանիան այս կողմից բացառութիւն է կազմում. արդեօք զուտ Գերմանական երկիր է նա: Ի՛նչ ցնորք. պմբողջ հարաւը Գալլիական է եղել, ամբողջ արևելքը՝ Էլբայից բռնած՝ սլաւոնական է: Իսկ նրա այն մասերը, որոնք զուտ լինելու յաւակնութիւն ունին, իրօք այդպէս են արդեօք: Մենք այստեղ շօշափում ենք այն խնդիրներից մէկը, որոնց մասին ամենից կարևոր է պարզ գաղաբարներ կազմել և թիւրիմացութիւնների խուսափել:

Յեղերի մասին եղած տարածայնութիւնները անվերջ են, որովհետև պատմաբան լեզուագէտները և մարդաբան-բնախօսները «ցեղ» բառը ընդունում են երկու՝ բոլորովին տարբեր՝ նշանակութեամբ: Մարդաբանների համար ցեղ բառը նոյն միտքն ունի, ինչ որ կենդանաբանութեան մէջ. նա ցոյց է տալիս իսկական սերումը, արիւնակցութիւնը: Բայց լեզուների և պատմութեան ուսումնասիրութիւնը չէ հասցնում նոյն բաժանմունքին.

ինչ որ բնախօսութիւնը: Կոլորազուլիս (брахице-
 фалъ) և «ձուազուլիս» (доликоцефалъ) 1) բա-
 ռերը անտեղի են և պատմութեան, և լեզուաբա-
 նութեան մէջ: Արիական լեզուներն ու կրօնական
 պաշտամունքը ստեղծող մարդկային խմբի մէջ
 արդէն կային կոլորազուլիս և ձուազուլիս մարդիկ:
 Նոյնը պիտի ասել և այն նախնական մարդկային
 խմբի մասին, որ ստեղծել

1) Ուսու հնագէտ-պատմաբան Соловьёвъ-ը ասում
 է, որ մեր երկրի չորրորդ կազմի (формация) սկզբում
 մարդկային գոյութեան հետքերը բազմաթիւ են եղել:
 Ուստի, այդ ժամանակաշրջանի (эпоха) գրանգերի համե-
 մատական ուսումնասիրութեամբ մարդաբանները եկան
 այն եզրակացութեան, որ այդ ժամանակ գոյութիւն ու-
 նէին Եւրոպայում երկու զանազան ցեղեր. մէկը, ինչպէս
 կարծում են, աւելի հին է իւր ձուաձև (доликоцефалъ)
 գանգով, իսկ միւսը կոլորաձև (брахицефалъ) գանգով,
 որը իւր կազմուածքով շատ մօտ է եղել ժամանակակից
 Սիբիրում ապրող էսկիմոսներին: Բացի դրանից՝ կոլորա-
 ձև գանգ ունեցողները ապրելիս են եղել Եւրոպայում
 աւելի հիւսիս, քան ձուաձև ունեցողները՝ և էլի ենթա-
 դրում են, որ ձուաձև գանգի տէրերը աւելի խելացի են
 եղել՝ քան կոլորաձև գանգ ունեցողները:

Ծան. հայ. թարգ. Յ. Ղ.

զուի սկզբնատիպերից. Արիական, Սեմական և
 Տուրանական նախնական խմբերը չունէին բնախօ-
 սական ոչ մի համանմանութիւն: Այդ խմբաւորու-
 թիւնները պատմական իրողութիւններ են, տեղի են
 ունեցած որոշեալ ժամանակամիջոցում, ասենք՝ հինգ
 կամ վեց հազար տարի սրանից առաջ, մինչ դեռ՝
 մարդկութեան կենդանաբանական սկիզբն անհետա-
 նում է անթափանցելի, անիմանալի խաւարի մէջ: Այն՝
 ինչ որ լեզուաբանօրէն ու պատմաբանօրէն կոչուում
 է գերմանական ցեղ, հաւանօրէն մարդկային ազգի
 համար բոլորովին ջոկ ընտանիք է կազմում: Բայց
 մարդաբանութեան տեսակէտից ընտանիք է դա-
 արդեօք: Անշուշտ — ոչ: Գերմանացի անհատը պատ-
 մութեան մէջ երևաց Գրիստոսից մի քանի դար
 առաջ: Անկասկած, գերմանացիք այդ ժամանակ
 գետնից չբուսան սուսկի նման. դրանից առաջ սլա-
 ւոնների հետ ցրուած լինելով՝ սկիւթացոց մեծ ու
 խառնիճազանճ բազմութեան մէջ, նոքա չունէին
 առանձնապէս իրենց անհատականութիւնը: Անզլիտ-
 ցին ամբողջ մարդկութեան մէջ մի տիպ է. բայց
 թէև անուանելով շատ անճիշտ կերպով՝ իբրև Ան-
 գլօ - Սակսոն կոչուած ցեղի 1) տիպ՝ նա ոչ

1) Գերմանական տարրը միացած թագաւորութեան
 մէջ աւելի շատ չէին՝ քան Փրանսիայում, երբ վերջինս
 տիրում էր Ելչասին ու Մեցին: Գերմաներէն լեզուն
 թագաւորեց Բրետանական կղզիներում միակ այն պատ-

Կեսարի ժամանակուայ Բրետոնցին է, ոչ Քէնզիս-
տի ժամանակուայ Անգլո-Սաքսն է, ոչ Կնուտի ժա-
մանակուայ Դանեացին, ոչ էլ Վելհէլմ աշխարհա-
կալի ժամանակուայ նորմանդացին. բայց նա այդ
բոլորի արդիւնքն է: Փրանսիացին ո՛չ Քալլիացի է, ո՛չ
Փրանկ է և ոչ էլ Բուրգունդացի. նա այն մեծ
կաթսայից ելածն է, որի մէջ՝ Փրանսիական թա-
գաւորի հսկողութեան տակ՝ խմորուել են միասին
ամենապէսպէս տարերքներ: Այսօր փերսէի կամ
Քէրնըսէի ¹⁾ բնակիչը իւր ծագմամբ ամենեւին չի
զանազանուում մերձակայ ծովափի նորմանդական
ազգաբնակութիւնից: XI դարու ամենասուր աչքն
էլ չըպիտի կարողանար նկատել ջրանցքի երկու
ափերի բնակչութեան մէջ ամենափոքր զանազա-
նութիւն: Աննշան հանգամանքներն արեցին, որ
Փիլիպոս-Օգոստոսը չը խլեց այդ կղզիները ու մը-
նացեալ Նորմանդիան: Եօթը դար իրարից բաժան-
ուած այդ երկու ժողովուրդները ոչ միայն օտա-
բացել էին իրարուց, այլ նաև բոլորովին կորցրել
էին իրանց համանմանութիւնը: Յեղը, ինչպէս ա-
սում են ուրիշ հայեացքի տէր պատմաբաններ, մի

ձառով, որ լատինական լեզուն չըփոխարինեց այնտեղ
կելտական բառաոին, ինչպէս այդ եղաւ Քալլիացոց մէջ
Փրանսիայում.

¹⁾ Փրանսիայի հիւսիսային նահանգում, Նոր-
մանդիայից քիչ հարաւ:

Ծան. հայ. թարգմ.

այնպիսի բան է, որ ստեղծուում է և քալքալուում:
Յեղի ուսումնասիրութիւնը կարևոր է մարդկու-
թեան պատմութեամբ զբաղուող գիտնականի հա-
մար. իսկ քաղաքագիտութեան մէջ նա անպատշաճ
է: Եւրոպայի քարտէզի ստեղծողների բնագրա-
բար գիտակցութիւնը ամենեւին ի նկատի չէ ունե-
ցել ցեղը. Եւրոպայի առաջին ազգութիւնները
բացառապէս խառնարիւն ազգութիւններ են:

Այսպէս ուրեմն ցեղի ազգեցութիւնը թէև
սկզբում շատ մեծ է լինում, բայց միշտ գնալով
կորցնում է իւր կարևորութիւնը: Մարդկութեան
պատմութիւնը էական կերպով զանազանուում է
կենդանաբանութիւնից: Այնտեղ ցեղը այն ամենը
չէ, ինչպէս կրճողների կամ կատունների դասի մէջ
է. ոչ ոք իրաւունք չունի պատել սաղ աշխարհ
և ապա բռնելով մարդու օձիքը կամ կոկորդը
ասել. «դու մեր արիւնիցն ես, դու մեզ ես պատ-
կանում»: Մարդաբանական յատկանիշներից զատ
կայ նաև միտք, արդարութիւն, ճշմարտութիւն,
գեղեցկութիւն, որ նոյն են ամենքի համար: Ազ-
գագրական այս քաղաքականութիւնը ստույգ չէ.
այն որ այսօր բանեցնում էք ուրիշների դէմ, վաղը
տեսնում էք նոյն բանը ձեր դէմ դարձած: Գերմանա-
ցիք, որ այնքան բարձր կանգնեցրին ազգագրու-
թեան դրօշակը, արդեօք մի օր չի՞ն տեսնի, որ սլաւո-
ները հասած իրենց հերթին՝ հետագօտեն Սա-
կսոնիայի և Լաուզիցի գիւղերի անուանները, խու-

զարկեն Վիլցերի կամ Օբոտրիտների հետքերը և հաշիւ պահանջեն այն բոլոր բազմութիւ սպանութիւնների ու վաճառների մասին, որ Օտտոները արել են իրենց նախնեաց վերաբերութեամբ: Ամենքի համար լաւ է գիտենալ մոռանալը:

Ես շատ եմ սիրում ազգագրութիւնը. դա մի զարմանալի հետաքրքրական գիտութիւն է. բայց ազատութիւն ցանկալով նրան, կըցանկայի, որ նա անգործադրելի մնար քաղաքականութեան մէջ: Ինչպէս ամենայն գիտութիւնների, այնպէս և ազգագրութեան մէջ համակարգութիւնները (система) փոփոխուում են. այդ է յոռաջագիմութեան պայմանը: Ուրեմն ազգութիւններն էլ պիտի փոփոխուեն համակարգութիւնների հետ: Այն ժամանակ մի տերութեան սահմաններն էլ պիտի հետեւին գիտութեան երեւումներին. հայրենասիրութիւնը կախուած պիտի լինէր որևէ՝ աւել կամ պակաս նորանշան՝ ենթադրական դատողութիւնից: հայրենասէրին պիտի ասէին. «դու մոլորուած էիր, արիւն էիր թափում ի զուր այսփնչի ու այնփնչի համար, կարծում էիր թէ Կելտ ես, ո՛չ — դու Գերմանացի ես». իսկ մի սասը տարի լետոյ՝ կասէին ձեզ՝ որ դու Սլաւոն ես: Գիտութիւնը չ'աղաւաղելու համար ազատենք նրան ցուցումներ տալուց այս հարցերի մասին, ուր այնքան մասնը շահեր են խառնուած իրար հետ: Հաւատացած եղէք, որ եթէ նրա շինքին ղենք գիւանագիտութեան

(ДИПЛОМАТИЯ) հիմունքներ մատակարարելու պարտքը, այն ժամանակ նրան յաճախակի պիտի մեղադրեն և տեղն ու տեղը բռնեն մարդահաճոյութեան յանցանքում: Նրա համար աւելի լաւ՝ բնական կը լինի — պահանջել նրանից միմիայն զուտ ճշմարտութիւն իւր շրջանում:

II. Ինչ որ նոր՝ այս բոպէիս ասացինք ցեղի մասին, նոյնը պիտի ասենք և լեզուի նկատմամբ: Լեզուն հրաւիրում է միութեան գործում, բայց չի հարկադրում բիրտ ուժով: Միացեալ Նահանգներն ու Անգլիան, Իսպանական Ամերիկան ու Իսպանիան խօսում են միևնոյն լեզուով, բայց մի ազգութիւն չեն կազմում: Ընդհակառակը, Ձվեցերիայում, ¹⁾ որ այնպէս լաւ է յորինուած, — որովհետև ստեղծուել է իւր զանազան մասերի հաւանութեամբ, կամ համաձայնութեամբ — երեք թէ չորս լեզու կայ: Մարդուս մէջ կայ լեզուից զատ՝ էլի ինչ որ է բարձր բան, դա նրա կամքն է: Ձվեցերիայի միացած լինելու ցանկութիւնը,

¹⁾ Այդ երկրամասը Հայաստանի նման մի լեռնոտ մոզայիբական երկիր է: Սրա մակերևոյթի կազմութիւնը ամեհի սարերով է բաժանուած ու մի լեռնոտ բարձրաւանդակ է կազմում ընդհանուր կերպով վեր առած Ալպեան սարերի գլխաւոր կէտերի հետ միասին. ճիշտ այնպէս, ինչպէս Հայաստանի Բարձրաւանդակը՝ սկսած Տաւրոսից և Անտի-Տաւրոսից Վարինեան լեռնաշղթայով մինչև Մասիսը իւր բոլոր փեշերով: Ծան. հայ. թարգ. Յ. Գ.

չընայելով նորա բառբառների պէսպէսութեանը, աւելի կարևոր իրողութիւն է՝ քան լեզուի նմանութիւնը, որին շատ անգամ կարելի է հասնել ուսումնասիրութեամբ:

Ֆրանսիային պատիւ է բերում, որ նա երբէք չէ ձգտել լեզուի միութեան բռնի միջոցներով: Մթթ է չի կարելի ունենալ միևնոյն զգացմունքներն ու միևնոյն խորհուրդները, մտքերը, սիրել միևնոյն առարկաները, թէև խօսել այլևայլ լեզուներով 2): Մենք քիչ առաջ խօսում էինք թէ ինչ անպատեհութիւն է կրճագէր՝ քաղաքականութիւնը ազգագրութեանը ենթարկելուց: Պակաս անպատեհութիւն չէր լինի, եթէ ենթարկէին նրան համեմատական լեզուաբանութեան: Ուսումնասիրութիւնների ու խոզարկութեանց կատարեալ ազատութիւն տանք այդ հետաքրքիր գիտութիւնների համար: չըխառնենք նրանց այն բանի հետ, ինչ որ կարող է վնասել նրանց պարզութեանը: Լեզուներին տուած քաղաքական նշանակութիւնը ծագում է նրանից:

2) Արգարև՝ իւրաքանչիւր ազգ կարող է սիրել նոյն սիրոյ առարկաները, ունենալ իւր սրբազան զգացմունքները, հասնել նոյնպէս նոյն բարձր քաղաքակրթութեան ու մտաւոր կուլտուրային իւր մայրենի լեզուով, ինչպէս և Եւրոպայի ամենաբարձր լուսաւորուած ազգութիւնները՝ ընդհանուր մարդկութեան աւելի օգտակար դառնալու համար:

Ծանօթ. հայ թարգմ. Յ. Ղ.

որ նոքա իբր ունին ցեղի նշաններ: Սաստիկ սխալ է: Պրուսիայում, որտեղ արդէն միայն գերմաներէն են խօսում մի քանի դար առաջ սլաւոններէն էին խօսում: Գալլերի երկրում խօսում են անգլիերէն. Գալլիայում և Իսպանիայում խօսում են Ալբա-Լօնգայի հնագոյն բառբառով: Եզիպտոսում խօսում են արաբերէն, ևայլն, օրինակները բազմաթիւ են: Նոյն իսկ սկիզբներում լեզուի նմանութիւնը չի լառաջացնում նաև ցեղի նմամութիւն: Վեր առնենք նախնի-արիական և նախնի-սեմական տոհմերը. երկուսի մէջ էլ կային ստրուկներ, որոնք իրանց տէրերի լեզուով էին խօսում. բայց ստրուկը շատ անգամ մի ցեղից էր, տէրը մի ուրիշ: Ելի կրկնում ենք. լեզուների այդ բաժանումները՝ Հնդո-Եւրոպականի, սեմականի ևայլն, որ այնքան կորովամտութեամբ թափանցել ևստեղծել է այն համեմատական լեզուագիտութիւնը, չեն համապատասխանում մարդաբանութեան բաժանումներին 1): Լեզուները պատմութեան արգասիք են կամ կազմ: Նոքա չեն կարող բացատրուել նրանց արեամբ, որոնք խօսում են այդ լեզուներով, բայց ամենայն դէպս՝ չեն կարող լեզուները կաշկանդել մարդկային ազատութիւնը, երբ ուզում ես բաժանուիլ այն ընտանիքից, որի հետ կապուել ես թէ կենդանութեան և թէ մահից լետոյ:

1) Որոնք զլիաւորապէս հիմնուած են մարդկանց գանգերի ու երեսի անկիւնաչափերի վրայ: Ծ. հայ. թ.

Լեզուի մասին այս միակողմանի դիտողութիւնը, ինչպէս և ցեղին ընծայած շատ խիստ ուշադրութիւնը, ունին իրանց վտանգները ու անպատէհ կողմերը: Երբ այստեղ սկսուում է չափազանցուած լինել, այն ժամանակ նրանք կը սահմանափակուին մի որոշ կենցաղակրթութեան մէջ. որը ընդունում է իբրև ազգային քաղաքակրթութիւն: Նրանք, (լեզուն ու ցեղը) սահմանափակում են, թագնուում, թողնում են այն մեծ ընդարձակ օդը, որ շնչում են իրանք և սմարգիւղութեան անսահման դաշտի մէջ՝ որպէսզի փակուել համազգասերների գաղտնի ժողովներում: Չ'կայ զրանից էլ վատ բան մարդու մտքի համար և զրանից էլ աւելի կորստաբեր բան ընդհանուր քաղաքակրթութեան համար: Չը մոռանանք այն հիմնական սկզբունքը, որ մարդս դեռ առաջ բանական-բարոյական էակ է նախ քան՝ այս կամ այն լեզուով պարփակուելը, նախ քան այս կամ այն ցեղի անդամ լինելը, այս կամ այն քաղաքակրթութեան պատկանելը: Փրանսիական, Գերմանական և Իտալական քաղաքակրթութիւնից դեռ՝ առաջ կայ համամարդկային քաղաքակրթութիւն: Նայեցէք վերածնութեան դարի մեծ մարդկանցը. նոքա ոչ Փրանսիացի էին, ոչ Իտալացի և ոչ գերմանացի. նոքա հնութեանը դիմելով՝ գտան մարդկային մտքի ճշմարիտ դաստիարակութեան գաղտնիքը և հոգով ու մարմնով նրան

անձնատուր են եղել: Եւ ինչպէս լաւ վարուեցին նրանք:

III. Կրօնն էլ չի կարող այնքան բաւարար հիմք դառնալ մի նորագոյն ազգութիւնների համախմբուելուն: Սկզբում կրօնը կախումն ունի նոյն իսկ համերաշխ ընկերական խմբի գոյութիւնից. ընկերական խումբն ընտանիքի ընդարձակումն էր: Կրօնական ծէսերը միմիայն ընտանեկան ծէսերն էին: Աթենացոց կրօնը նոյն իսկ Աթէնքի, նրանց առասպելական հիմնադիրների, օրէնքների ու սովորութիւնների պաշտամունքն էր: Նա չէր պարունակում իւր մէջ ոչ մի դաւանական աստուածաբանութիւն. այլ դա պետական կրօն էր բառիս լիուրի նշանակութեամբ: Նա Աթենացի չէր համարում՝ եթէ հրաժարուէր դաւանել այդ կրօնը. իսկպէս դա մարմնացած Ակրօպօլիսի ¹⁾ պաշտամունքն էր: Երգուել Ագլաւրի ²⁾ բապնի կամ սեղանի վրայ, նշանակում էր

¹⁾ Ակրօպօլիս—Յունաց նախնի թագաւորների ու զիւլցազունների ամրոց էր, այնպէս՝ ինչպէս միջին դարերում աւատական իշխանների ամրոցները: Յունաստանում նախ քան քաղաքների հիմնուելը, այդպիսի ամրոցներ հիմնուեցան բարձրաւանդակների կամ բլուրների վրայ, որոնց շուրջը յետոյ հիմնուեցան քաղաքներ. այն է՝ Աթէնքը, Սպարտան և այլն:

²⁾ Ագլաւրը—նոյն իսկ Ակրօպօլիսն է, որը զօհեց իրան հայրենիքի ազատութեան համար:

ուխտել մեռնել իւր հայրենիքի համար: Դաւանել
այդ կրօնը՝ նոյն էր, ինչ որ այժմ զինուորու թեան
վիճակ հանել. դա զրօշակի պաշտամունք էր.
հրաժարուել այդ պաշտամունքին մասնակցելուց,
նշանակում էր, ինչպէս արդի հասարակութեանց
մէջ խոյս տալ զինուորական ծառայութիւնից: Այդ
պիսի մարդու համար նշանակում էր թէ յայտա-
րարել՝ որ Աթենացի չէ: Պարզ էր միւս կողմից,
որ մի այդպիսի պաշտամունք խորհուրդ չ'պիտի
ուեննար նրա համար, ով Աթենացի չէր: Սակայն
այն ժամանակ այնքան էլ ջանք չէին գործ դնում
փողոցային նորահաւատներ հաւաքելու օտարերկ-
րացիներից՝ բռնի ընդունել տալով այդ պաշտա-
մունքը: Աթէնքի ստրուկները չէին դաւանում այն:
Նոյնը եղաւ և միջին դարերի մի քանի փոքրիկ
հասարակապետութիւնների մէջ: Նա լաւ Վե-
նետիկցի չէր, ով ամենեւին չէր երդւում
Սուրբ Մարկոսի անունով: Լաւ Ամալֆետացի
չէր, ով Սուրբ Անդրէասին դրախտի սիւնս
բոլոր սրբերից վեր չէր դասի: Այս փոքրիկ հասա-
րակութիւնների մէջ այն, որ յետոյ հայաճանք ու
բռնութիւն դարձաւ, օրինաւոր էր այդ ժամանակ
և նոյնչափ սակաւ հետեանքներ ունէր, որչափ
մեզանում ընտանիքի հօր տօնը շնորհաւորելը և
նոր տարուայ օրը՝ նրան ուղղուած բարեմաղթու-
թիւնները:

Այն ինչ որ ճշմարիտ էր Սպարտայում և Աթէն-

քում, ճիշտ չէր համարոււմ այլ ևս այն թագաւո-
րութիւններում, որոնք կազմուել էին Աղէքսանդրի
աշխարհակալութիւնից յետոյ, նա մանաւանդ Հռո-
մէական կայսերութեան մէջ: Անտիոքոս Էփիփանի
հալածանքները Արևելքը Օլիմպիական Արամպդի
պաշտամունքին զոհ դարձնելու նպատակով,
Հռոմէական կայսերութեան հալածանքները կար-
ծեցեալ պետական կեղծ կրօնը կանգուն պա-
հելու համար՝ զոքա բոլորը լիմար սխալ-
մունք, ոճիր և կատարեալ անմտութիւն էին:
Մեր օրերը իրերի վիճակը լիովին պարզ է: Այլևս
չկան միատեսակ միամիտ հաւատացողների բազ-
մութիւններ. ոմեն ոք հաւատում ու պաշտում է
իւր անձնական տեսակէտից, ինչպէս որ կարող է
և ինչ որ ցանկանում է. էլ արդէն չըկայ պետա-
կան ընդհանուր պարտաւորող կրօնը: Կարելի է
Ֆրանսիացի, Անգլիացի, Գերմանացի լինել՝ մնալով
կաթոլիկ, բողոքական, մովսիսական և վերջապէս
չըղաւանող ոչ մի կրօն: Կրօնը անհատական բան է
դառել. նա կախուած է իւրաքանչիւրի խղճից:
Ազգութիւնները բաժանել կաթոլիկների, բողոքա-
կանների այլևս գոյութիւն չունի: Այն կրօնը, որ
յիսուն տարի առաջ այնքան նշանաւոր տարր էր
Բելգիայի կազմակերպութեան գործում, այժմ ևս
պահպանում է իւր բոլոր կարևորութիւնը իւրա-
քանչիւրի խղճի մէջ միայն, բայց նա՝ գրէթէ ամ.
բողջովին զուրս է եկել այն բռնի, կաշկանդող

հիմունքներից, որոնք պատուար են քաշում և ատելութիւն սերմանում ժողովուրդների մէջ:

IV. Մահերի նոյնութիւնը կամ ընդհանրութիւնը՝ անկասկած մի զօրեղ կարևոր կապ է մարդկանց մէջ: Սակայն՝ բաւարար են արդեօք՝ միայն այդ շահերը ազգութիւն ստեղծելու համար: Չեմ կարծում: Մահերի նոյնութիւնը առաջ է բերում առևտրական դաշինքներ: Իսկ ազգութեան մէջ կան նաև յայտնի չափով խելք և զգացմունք նա՛ միասին վեր արած և՛ հոգի է և՛ մարմին: Մի որ և է Zolliveren (Մաքսային դաշնադրութիւն) յ) գեռ ևս բառի վէճ մտքով հայրենիք չէ:

V. Աշխարհագրութիւնը՝ իբրև բնական սահմաններ՝ անկասկած մեծ նշանակութիւն ունի ազգութիւնների բաժանման գործում: Աշխարհագրութիւնը պատմութեան էական գործօններից մէկն է: Գետերն են առաջնորդել ցեղերին, լեռներն են նրանց դադարեցրել, արգելք եղել. առաջինները նպաստել են պատմական շարժումներին, իսկ վերջինները խանգարել: Սակայն կարելի

1) Եթէ այդպիսի մի դաշնադրութիւն կապուի երկու տէրութեանց մէջ, ղեկուբ Գերմանիայի և Ռուսաստանի, այն ժամանակ այդ երկու տէրութիւնները իրաւունք ունին իրանց ապրանքները առանց մաքսի թոյլատրել մուտք ունենալու իրար մէջ:

Ծան. հայ. թարգմ.

էր ասել արդեօք, ինչպէս մի քանի կուսակցութիւններ կարծում են, որ ազգութեան սահմանները քարտէզի վրայ գծած են արդէն և՛ որ նա՛ ազգութիւնը իրաւունք ունի սեպհականացնել ինչ որ անհրաժեշտ է իւր սահմանները կոլորացնելու համար, որ նա հասնի այս ինչ սարին կամ այն ինչ գետին, բացի այդ՝ վարմունքով, նոքացոյց են աւլիս մի յայտնի տեսակ ընդունակութիւն սահմանագծեր կարգելու քմահաճութեամբ յանուն «սկզբունքի» (à priori): Սրանից կամայական, սրանից աղետալի ու կորստաբեր վարդապետութիւն չեմ ճանաչում ես: Դրանով օրինական կերպաւանք են ստանում բռնութիւնները: Բայց նախ և առաջ, արդեօք լեռները կամ գետերը կազմում են բնական սահմաններ: Խօսք չըկայ, որ լեռները բաժանում են, բայց չէ՛ որ գետերը աւելի շուտ են միացնում: Յետոյ, բոլոր լեռները խօմ չեն կարող բաժանել տէրութիւններին. որ լեռները կարող են բաժանել և որոնք—ոչ: Բիարիցից յ) մինչև Տօրնէօ չըկայ մի գետաբերան, որը աւելի խիստ սահմանափակելու բնաւորութիւն ունենար,

1) Բիարիցա գտնւում է Տիւսիսային Փրանսիայում, Գասկոնի ծոցի վրայ: Այդ բաղաբը նշանաւոր է իւր հանքային ջրերով: Ծ. հ. թ.

2) Տօրնէօ — գտնւում է համանուն գետի վրայ Շվեդիայի և Ռուսաստանի մէջ եղած սահմաններում:

Ծան. հայ. թարգմ.

քան մի որևէ ուրիշ գետաբերան: Եթէ պատմութիւնը կամենար, այն ժամանակ Լուառա, Սենա, Մասս, Էլբա, Օդեր, ինչպէս և Հրենսոը՝ կունենալին բնական սահմանների բնաւորութիւն, որով այնքան յանցանք են գործել մարդոց հիմնական իրաւունքի—նոցա ցանկութեանց դէմ: Խօսում են ռազմագիտական հիմունքների մասին. բացարձակ ոչինչ չըկայ. պարզ է, որ շատ զիջողութիւններ պէտք է անել կարիքից ստիպուած: Բայց այդ զիջումները չըպէտք է շատ հեռու գնան. ապա թէ ոչ, ամբողջ աշխարհը կը հռչակէ իւր ռազմական յարմարութիւնները և կ'ըլինին անվերջ տարաձայնութիւններ ու պատերազմներ: Երկիրը ցեղից աւելի՝ չի ստեղծում ազգութիւն. երկիրը տալիս է հիմքը—մրցութեան, կռուի և աշխատանքի դաշտը: Իսկ մարդը տալիս է հոգի: Սա իր ողջ գոյութեամբ ու անբողջովին ձգտում է կազմել այն սրբազան առարկան, որ կոչւում է ժողովուրդ: Այստեղ բաւական չէ լոկ միայն նիւթականը: Ազգութիւնը մի հոգևոր՝ տեսական սկզբունք է՝ բոլոր պատմութեան փոխադարձ ներգործութիւնների խորքից: Նա հոգեւոր ընտանիք է՝ և ոչ թէ խառնիճաղանճ ամբոխ, պարփակուած կամ բանտարկուած մի երկրի որոշ սահմաններում:

Մենք տեսանք, որ այդպիսի մի հոգևոր կամ տեսական սկզբունք ստեղծելու համար բաւական

չեն ցեղը, լեզուն, շահերը, կրօնի նմանութիւնը, աշխարհագրութիւնը և ռազմական պիտոյքները: Ուրեմն՝ էլ ինչ է պէտք: Այս բոլորից յետոյ՝ ես կ'աշխատեմ երկար չ'յոգնեցնել ձեր ռազգրութիւնը:

Գ.

Ազգութիւնը մի սրբազան ոգի է, հոգեղէն սկզբունք: Յատկապէս ասած՝ երկու հանգամանքներ են ծնեցնում այդ ոգին, այդ հոգեղէն սկզբունքը: Մէկն ազգի անցեալի մէջն է, իսկ միւսը՝ ներկայի: Նոցանից մէկը՝ ընդհանուր սեպհականութիւն է անցեալի, հարուստ լիշատակների ժառանգութիւն. իսկ միւսը՝ իրական համաձայնութիւն, անհատական կամք, միասին ապրելու ցանկութիւն, ցանկութիւն շարունակել պահպանելու իւր նախնիքներից ստացած թանկագին ժառանգութեան գոյութիւնը, որն ազգութիւն կազմող անհատները ստացել են ամբողջութեամբ: Պարոններ, մարդս յանկարծ յօրինել չի կարող: Ազգութիւնը, ինչպէս և անհատը, սերտ կապ ունի երկար անցեալի, շատ ջանքերի, զոհողութիւնների ու անձնագոհութիւնների հետ: Նախնեաց պաշտամունքն ամենից շատ օրինականն է. մենք մեր ներկայով լիովին պարտական ենք մեր նախնեաց: Ազգութեան դիւցազնական անցեալը, նրա մեծ մարդիկը, ճշմարիտ ու

առաքինի փառքը—ահա՛ այն ընկերական հարըստութիւնը, որի վերայ հիմնուած է ազգութեան սուրբ գաղափարը: Ունենալ ընդհանուր պարծանքներ անցեալում, ընդհանուր կամք ներկայում, կատարել միասին եղբայրական ուժով մեծամեծ քաջագործութիւններ, ցանկալ էլի կատարելու միևնոյն բաները յետագայ ազատ կեանքում—ահա՛ ազգ լինելու էսկան պայմանները: Մեզանից իւրաքանչիւրը կարող է իւր անձի նկատմամբ դատել, որ սովորաբար՝ մարդ սիրում է տոկալ՝ թէ աշխատութեան, թէ թշուառութեան, թէ հալածանքի և թէ կոպիտ բռնութեան... միով բանիւ ամեն մի տեսակ նեղութիւնների միմիայն այն ժամանակ՝ եթէ այդպիսի հալածանքի ենթարկուող անհատները իրար հետ միասին եղբայրաբար են կրում իրանց նեղութիւնները, եթէ նոքա դառնութեան բաժակը իրար մէջ են բաժանում լանուս ազատութեան: Ճիշտ այնպէս, ինչպէս սովորաբար սիրում են այն տունը կամ այն հաստատութիւնը, որը ընկերաբար են կառուցած և որը սերունդ է սերունդ հասել է աւանդաբար: Մի սպարտական երգ ասում է. «մենք այն ենք, ինչ որ դուք էիք, մենք այն կը լինենք, ինչ որ դուք էք»: Այս է ամեն մի հայրենիքի պարզ ու համառօտ օրհներգութիւնը: Անցեալից ժառանգութիւն ստացած փառքն ու անբաժան կերպով կրած տանջանքներն ու հալածանքները, ապագայում միևնոյն ծրագիրն են.

տանջուիլ, չարչարուիլ, ուրախանալ, հրճուիլ և յուսալ միասին ազատութեան ժամին. ահա թէ ինչ բաներ աւելի թանգ են ազգութեան համար, քան մաքսային դաշնադրութիւններն ու մի երկրի արհեստական սահմանները, որոնք հետևանք են ռազմագիտական ճարպիկութեանց. ահա թէ ինչ բանն է կազմում ազգութիւն, չնայելով ցեղի և լեզուի տարբերութեանց: Ես նոր ասացի. «տանջուիլ միասին». այո՛, պարոններ, ընդհանուր տանջանքը աւելի է կապում ցրուած ազգութեան անդամներին, քան թէ ուրախութիւնը: Ազգային լիշտակների մէջ տանջանքներն աւելի կարևոր նշանակութիւն ունին, քան նրա յղթանակները՝ որովհետև նոքա, այսինքն տանջանքները, պարտաւորութիւններ են դնում մարդու վրայ. Իրանք ղեկավարում են բազմութեան բջիռը շարժումները: Ուրեմն՝ ազգութիւնը մի մեծ համերաշխութիւն է (СОЛИДАРНОСТЬ), որպէս պտուղ այն սրբազան զգացմունքների, որոնց համար մարդս զոհեր է բերել ու դեռ ապագայում նոյնպէս պիտի բերէ: Ազգութիւն ասելով՝ ենթադրում ենք մի անցեալ, իսկ ներկայում այն անցեալը կրկնում է՝ իբրև մի շօշափելի փաստ, որը պարզ արտայայտւում է ընդհանուր համերաշխութեան և միասին ապրելու ցանկութեան մէջ: Ազգութեան գոյութիւնը (ներեցէք ինձ այսպիսի ալլաբանութեան համար) մի ամենօրեայ ռամկական վճիռ է (ПЛО-

ДИСПИТЬ). Ինչպէս՝ մի անհատ ինքը իւր գոյութիւնով հաստատում է, որ նրա մէջ կայ կեանք՝ իբրև գրաւական բարօր վիճակի:

Ահ, ես հաւատացած եմ, որ սա պակաս բնազանցական է՝ քան աստուածային իրաւունքը. դա աւելի քիչ դաժան ու խիստ է, քան կեղծ պատմական իրաւունքը: Այս տեսակէտից՝ ինչպէս ազգութիւնը, այնպէս և մի թագաւոր իրաւունք չունի ասելու մի նահանգի թէ «դու ինձ ես պատկանում, ես քեզ վերեմ առնում»: Մեզ համար նահանգը՝ նրա բնակիչներն են: Եթէ որեւէ մէկին այս դէպքում մի բան ենք հարցնելու, այդ բնակիչներին պիտի հարցնենք: Ազգութեան ճշմարիտ շահը հէնց նրանումն է, որ չըմիացնեն ու չըբռնաբարեն իրանց ձեռքի տակ մի երկիր. հակառակ վերջինիս ցանկութեան: Ազգութեան կամքն է— միակ օրինաւոր ճշմարիտ նշանաբանը, որին պիտի միշտ դիմել ու հարցնել այսպիսի դէպքերում:

Մենք արտաքսեցինք քաղաքականութիւնից բնազանցական ու աստուածաբանական կանխակալ կարծիքները: Ել ինչ է մնում: Մնում է մարդը, նրա ցանկութիւնները և նրա կարիքները: Գուցէ գուք ասէք թէ՛ մի ազգութեան բաժանումը զանազան մասերի, նրա անկումը՝ արդիւնք են այն սիստեմայի, որով շատ անգամ այդ փթած, ծերացած մարմնակազմը, այն է՝ ազգութեան բաղդը, գտնւում է կիսա-

վիրթ ու խաւարամիտ մարդկանց ձեռքին): Պարզ բան է, որ այդպիսի հարցի վրայ խօսելիս ոչ մի սկզբունք ծայրայեղութեան չըպիտի հասցնել: Այդ տեսակ ճշմարտութիւնները գործադրելի են միայն իրանց համազումար և ամենաընդհանուր դրութեամբ: Մարդկային ցանկութիւնները փոփոխւում են. բայց ինչ բան չէ փոխւում լուսնի տակ այս աշխարհում: Ազգութիւնները յաւիտենական բաներ չեն: Նրանք ինչպէս կազմուել են, այնպէս էլ պիտի քայքայուին: Ետ հաւանական է, որ Եւրոպական հանուր դաշնակցութիւնը նրանց տեղը բռնէ, բայց մեր դարը դեռ այդպիսի օրէնք չունի: Այժմս ազգութիւնների գոյութիւնը ոչ թէ օգտակար, այլ նոյն իսկ անհրաժեշտ կարիք է: Նրանց գոյութիւնը գրաւական է ազատութեան, որը կ'անհետանար, եթէ ամբողջ աշխարհս ունենար միայն մի օրէնք և մի տէր:

Ազգութիւններն իրանց պէսպէս ընդունակութիւններով, որոնք շատ անգամ իրարու հակառակ են լինում, ծառայում են ընդհանուր քաղաքակրթութեան վէհ գործին: բոլորը մասնակցում

1) Ինչպէս ներկայումս մեր երկրի մի վիճակը գրտնւում է մի բանի յետադէմ, շահախնդիր, խաւարամիտ, մարդատեաց, ապառաժ մի խումբ պնակալէզների կամ բիւրակրատների ձեռքին:

են մարդկութեան այն մեծ համերգին, որն ընդհանրապէս առած՝ ամենից բարձր ու գաղափարական բանն է, որին մենք հասնում ենք: Ազգութիւնները՝ իրանց կղզիացած կեանքով վեր առած՝ ունին թոյլ կողմեր: Ես միշտ ինքս ինձ ասում եմ, որ մի անհատ, եթէ նա նոյն իսկ ունենար այնպիսի պակասութիւններ, որոնք ազգութեան համար երևային իբրև արժանիք, որը սննուիր սնոտի փառքով, լինէր նախանձոտ, նեղ, եսասէր, դատարկապորտ, ջուր ծեծող, նենգամիտ և որը վերջապէս ոչ մի բան չըկարողանար տանել առանց արհամարհանքի, ահա այդպիսի անհատը մարդկանցից ամենաանտանելին կըլինէր: Բայց բոլոր այդ մանր-մուշոր աններդաշնակութիւնները, անհետանում, կորչում են ընդհանրութեան մէջ: Թշուառ մարդկութիւն: Ինչէր ես քաշել և դեռ էլի սրբան փորձանքներ են սպասում քեզ պապայում: Ո՛հ, երանի՜ թէ իմաստութեան ոգին կարողանար քեզ առաջնորդել պահպանելու համար այն անթիւ ու անհամար վտանգներէց, որոնք սփռուած են, իբրև փուռ և տատասկ քո արդարութեան ճանապարհի վրայ:

Պարոններ, ամփոփելով բոլոր իմ ասածները, հաստատում եմ, որ մարդս ստրուկ չէ՝ ո՛չ իւր ցեղին, ո՛չ լեզուին, ո՛չ իւր կրօնին, ո՛չ գետերի հոսանքին և ո՛չ լեռնաշղթաների ուղղութեան: Առողջ մտքի ու ջերմ սրտի տէր մարդկանց ստուար միութեան

թիւնը ստեղծում կամ ծնեցնում է մի բարոյական գիտակցութիւն, որ կոչուում է ազգութիւն: Բայց որովհետև այդ բարոյական գիտակցութիւնը իւր ոյժը կամ զօրութիւնը ամրացնում, կազդուրում է զոհաբերութիւններով, որոնց համար պահանջուում է ազգի իւրաքանչիւր անհատից՝ դատապարտուել, տանջուել ընդհանուր օգտի համար, ուստի այդ գիտակցութիւնը օրինաւոր է և գոյութեան իրաւունք ունի: Եթէ կասկածներ ծագին ազգութեան սահմանների վերաբերմամբ, հարցուցէք վիճող ազգերին, որովհետև այդ հարցում աւելի նոքա՞ ձայն տալու իրաւունք ունին: Բայց այս խօսքերը անպատճառ ժպիտ կ'յարուցանեն բնազանց քաղաքագէտների (трансцендентальные политики) երեսին, այդ «անսխալականների», որոնց ամբողջ կեանքը լի է սխալներով և որոնք միևնոյն ժամանակ իրանց անպարտաւան սկզբունքների բարձունքից իբրև խղճում են մեզ՝ թշուառ արարածներին: «Հարցնել ազգերին, է՛հ, ի՛նչ միամտութիւն: Ա՛խ, այդ ֆրանսիական վնասակար ազատ գաղափարները, որոնք ձգտում են փոխարինել ճարպիկ դիւանագիտութեանն ու պատերազմին երեսխայական պարզամիտ միջոցներով: ») Բայց սպասէք, պարոն-

1) Ինչպէս ներկայիս ինքնահաւանների ու սնապանծների սխալը:

ներ, թող անցնի այդ բնագանցների թագաւորութիւնը, թող՝ շուտով անցնի նոցա դարը՝ տանենք առայժմ հզօրների անտեղի արհամարհանքը: Գուցէ՞ երկարատե ու անպտուղ ջանքերից ու խարխափումներից յետոյ՝ նոքա հասնեն մեր փորձառական համեստ եզրակացութիւններին: Ապագայում իրաւացի լինելու հնարքներից մէկն է՝ համբերութիւն ունենալ տանելու կեանքի յայտնի ըոպէներում սյնպիսի անհէթէթ մեղադրանքներ, որոնց նպատակըն է դատապարտել մեզ յետադիմութեան մէջ:

Իսկ ես՝ պիտի ասեմ հայերիս վերաբերմամբ, որ անպայման համամիտ գոլով համբաւաւոր գիտնական հեղինակի հետ ազգութեան գաղափարի նկատմամբ՝ պէտք է մեզ օրինակ առնել վերոյիշեալ պատմական առաջաւոր ազգերից մարդկութեան ընդհանուր ներդաշնակութեան ու համերգի մէջ պատուաւոր տեղ ունենալու:

Պարզենք մեր՝ փոքր ի շատէ՛ դարևոր կուլտուրական դրօշակը: Վանենք մեզանից հնադարեան ժառանգաբար ստացած անմիաբանութեան, անտարբերութեան, տարաձայնութեան, մատնութեան, քսութեան, բծնութեան, նեղ, հպարտ, եսասէր կուսակցութեան, մեզ բաժան-բաժան ապրեցող նենգամիտ՝ չար ու խարդաւանող ոգին: Մէկնենք իրարու պինդ կերպով եղբայրութեան մեր կորովի՝ սերտ ձեռքերը: Օգնենք միմեանց ամենուրէք ու ամեն պարագաներում՝ իբրև նշան մեր քաղաքակրթութեան ու սիրոյ զարգացման՝ յանուն ընկերական ազատ կեանքի: Մեր

յոյսն ու ապաւէնը մեզ վրայ դնենք և ո՛չ ուրիշ-
 ների դուռը բաղխենք: Կարգաւորենք գիտակցօրէն
 մեր մատաղ սէրնդի՝ այդ մեր ուրախ երկրի ծա-
 ղիկների իրական ուսման ու դաստիարակութեան
 ուղիղ ճանապարհը: Ազատենք նրանց ներկայ սխալ
 կորստաբեր ուսումնարանական կեանքի ծուռ ու-
 սման ընթացքից, որպէսզի կանոնաւոր կեր-
 պով ծլին, ծաղկին, զօրանան մեր ազգայ-
 նութեան կեանքի ապագայ միակ յոյսերը: Թող
 խրատ լինին մեզ՝ մեր ներկայիս կրած տանջանք-
 ները, օտարների անտեղի արհամարանքը: Թող
 չը բաժանեն մեզ՝ երկրիս ոչ ահռելի անդունդներն
 ու ձորերը, ո՛չ ամեհի սարերը, ո՛չ յորդոհոս գե-
 տերը և ո՛չ հեռաւոր տարածութիւնք:

Թող չը բաժանեն մեզ՝ ոչ մեր լե-
 զուի տարբերութիւնքը, ոչ լայնածաւալ բացար-
 ձակ ճշմարիտ քրիստոնէական կրօնի առանձնա-
 յատկութիւնները և ոչ էլ մեր տոհմական խորտա-
 նալը, այն մեծ՝ ապագայ հասարակական կեանքի վէճ
 գործի առաջ: Եթէ մենք քարոզում ենք՝ և պարտ
 ենք քարոզել մեզ շրջապատող ստոր զարգացման
 ու կուլտուրայից զուրկ ազգերին եզրայրութիւն,
 սէր, միաբանութիւն, յառաջադիմութիւն, համա-
 կամ ոյժ յանուն յետագայ բարօր վիճակի ու ազա-
 տութեան, ուրեմն ո՛չ ապաքէն մենք առաւել ևս՝
 նախ՝ մենք պիտի ամրապնդենք և իւրացնենք մեր
 մէջ այդ ամէնը ու անխտիր, միահամուռ կերպով՝

ձեռք-ձեռքի տուած՝ յառած աչքերով՝ նա-
 լենք մի որոշ սրբազան դրօշակի վրայ, որի վեր-
 նագիրն է. «միութիւն և յառաջադիմութիւն հայու-
 թեան՝ յանուն նորա յետագայ բարօր քաղաքակիրթ
 վիճակի ու ազգային ազատութեան՝ հետևապէս
 մարդկութեան խաղաղ նաւահանգիստ հասնելու»:

Յ. ՂԱՐԱԳԵՕՂԵԱՆՅ.



ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ:

Երես:	Տպուած է:	Պէտք է լինի:
12	մտտւորապէս	մտաւորապէս
»	խազի	խազի
12	մաքովն	մաքովն
»	աղբին	աղբին
19	առաձգական	արաձգական
20	չ'սւնեցան	չ'ունեցան
21	տայեքները	տարրերքները
22	գալիս	գալիս
24	դեխավարուում	դեկավարուում.
»	(династія):	(династія),
»	կասկած չըկայ	Գասկած չըկայ
»	ստացել	ստացել
25	գաղաբար	գաղափար
28	առտջնակարգ	առաջնակարգ
»	Սպարտայում	Սպարտայում
29	կայսերութեան	կայսերութեան
30	հաւաքել	հաւաքել
»	այնտեղ	այնտեղ
31	Թիւրիմացութիւնների	Թիւրիմացութիւններից
32	Ծան. մէջ գրանդերի	գանգերի
»	գոյութեան	գոյութեան

Գրքերի մշտական պահեստը աշխատասիրողի մօտ.
 Тифлисъ, Авлабаръ Архангельская ул. д.
 № 32. А. Карагезянцу Գրքերը ծախուում են
 նաև Տփլիսի բոլոր գրավաճառանոցներում:
 Օտար քաղաքներից պահանջողները գրքերի արժէ-
 քի ճանապարհի ծախսը կանխիկ պիտի ուղարկեն:
 Միանուագ մի քանի գրքեր պահանջողները ճանա-
 պարհի ծախքը վճարում են ստանալու միջոցին:
 Գումարով առնողներին 25% զեղչով՝ ճանապար-
 հածախսը հետը:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ - ՊԱՆՍԻՕՆ

Յ ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

(Գոյութեան XV-րդ տարի):

Ընդունում եմ աշակերտներ՝ իբրև գիշերօթիկներ, ցե-
 բեկօթիկներ և երթեկներ բոլոր միջնակարգ դպրոցները
 մտնելու համար: Ընդունում են նաև բոլոր գիմնապիս-
 ների, ընթացական, վաճառականական և ուրիշ դպրոցների
 ստորին դասարանի աշակերտները իրանց տուած դասերը
 վերակրկնելով հանդերձ (съ ренетивией): Ուսումնարա-
 նում աւանդուում են՝ կրօն, հայոց լեզու, Փրան., գերմ.
 անգլիակ. լեզուներ նաև, իսկ մանուկների համար բա-
 րոյակսօսութիւն հայ լեզուով: Վարժարանին կից կայ ման-
 կական պարտեզ ևս դեռահասակների համար հայ լեզուով:
 ՎԱՐՉԸ ՉԱՓԱՒՈՐ Է:

Հասցէս՝ Тифлисъ, Авлабаръ, Архангельская, № 32.

Ու սումնարանի վերատեսուչ՝


Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

11

11





ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Սև-լեռնցիք կամ ղարաղաղի քաջեր
(տոհ. պատ.) 15
2. Կնոջ կսցումը՝ դրուժիւն ու իրաւունքը
հասարակութեան մէջ 20
3. Եւանգելիսնա կամ հայրենիքի երկու ան-
կեղծ սիրահարներ 20
4. Կօլմարի զատաւորի անսիլը կամ հայրենի-
քի անհարազատ գաւաղը 10
5. Ի՞նչ է ազգութիւնը: Ռընանի. 20
6. Շարլ-Բիգօլի պատասխանը Ռընանի ազգու-
թեան գաղաբարի մասին 20
7. Պատիւ պիէսը Զուդերմանի կօմեդ. 4 գործ. 40
8. Արեան ձայնը դրամա 4 գործ. 40
9. Սէր կամ բարօր կեանքի նեցուկը 8

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵՒ ԼՈՅՍ
Կ՛ՏԵՍՆԻՆ

1. Զէյթունցիներ (մեզնից անկախ պատճա-
ռից առ այժմ չի տպագրուի):
2. Օրլեանի կոյսը Շիլլերի (պատկերներով ըն-
տանիքի և դպրոցների համար):
3. Փարօսի լապտերավառը կամ հայրենիքի
կարօտի զօհը:
4. Զիլլերի կենսագրութիւնը պատ. ընտա-
նիքի և դպրոցների համար:
5. Գնանք Նորա լետեից, Հենրիկոս Սենկելիչի:

« Ազգային գրադարան



NL0195036

8

